

Գարրիկեան փողըն գոչէ,
Սուրբ սմենայն անդր հաւաքին,
Արդարոց դասքըն բերկրին...:
(ԺՄԳՐԲ. ՀԱՅ ԵԿ.)

Հրեշտակապետաց տօնն էր:

Եւ հոգի մը վաղայարոյց՝ փութկոտ կը վերաթեւէր երկրէս ղէպի երկինք, ձայնակցելու հրեշտակային փառաբանութեան:

Մխիթարայ Ուխտին կը պատկանէր այդ հոգին: Մկրտութեան անունը՝ հրեշտակային ու քաղցրախօսիկ երկու մեծ Սուրբերու անունովը՝ Փրանկիսկոս, որոնցմէ կ'երևի թէ ընդունած էր սրբաբար ցուրեր:

Սքեմաւորուելով ըստ կրօնին՝ կը կոչուի Փրանկիսկոսը Աւետիք: Այնուհետեւ ի մի կը ձուլուին իր մէջ անուններու ճառագայթած իմաստները՝ շնորհիւ ոսկեցանդակ խօսքերուն իր սրբակենցաղ դաստիարակ Հ. Գարեգին Վ. Զարրհանալեանի. և յետ կատարելու մշտնջենաւոր Ուխտը՝ օր մ'ալ (1887 Սպրիլ 10) կը կերտուի Մխիթարեան կրօնաւորը աստուածային խորանին պաշտօնեայ, Ալիշաններու կենդանի շունչովն արդէն տաքցած Ս. Ղազարու կղզեկին մէջ: Ուխտադրութեան հետ վճռական հաստատութիւն մ'առած ըլլալու է հանգուցեալ Հօր առ Տիրամայրն ունեցած անպայման սէրն ու վստահութիւնն ալ, նախապէս իւրացուած ու զուգադիպած անշուշտ իր փիլոնառութեան օրը՝ Աւետիք կոչումին:

Արդէն բոլոր Մխիթարեաններու ծանօթ է իր այդ ջերմեռանդական նախասիրութիւնը: Ան կը դաւանէր կորովի հաւատքով ու շնորհապարտ զգացումով թէ Ս. Կոյսն եղած էր բովանդակ կենացը մէջ իր միակ յոյսն ու ապաւէնը՝ յաջողութեանց ու ձախողութեանց պահերուն, ինչ որ ըստ առթին կը պատմէր ժամանակին ալ մեզ աշակերտներու և հոգևոր որդւոց՝ իբր աւանդ և խրախոյս, և գտած բարեքներուն ալ ինքզինքը անարժան կը սեպէր՝ խոր և անկեղծ համոզմամբ մը: Եւ իրօք, զրեթէ չէ լսուած մեր հանգուցեալ Հօր բերնէն հոգեշահ խօսք մը՝ առանց Տիրամօր հանդէպ իր սիրոյն և հաւատքին նշանները զգացնելու:

Հ. Աւետիք Վ.ի ամբողջ կեանքը նկատի ունենալով՝ կարելի է այր Աստուծոյ որակել զինքը: Իր հոգեկան ներքին եռուզեռը չէր կրնար ծածկել, և յաճախ կը մատնուէր նոյն իսկ փութկոտ քայլերէն, կարծես թէ մրցանքի ելած էին իր մէջ ձիրք և առաքինութիւնը: Գրած նամակները կրօնաւորական և քահանայական հոգւոյն ջինջ հայելիներն են:

Շատ ցայտուն էին անոր արրահամեան հաւատքն ու հնազանդութիւնը, ինչպէս նաև զարմանալի խոնարհութիւն մը. միով կը դաւանէր անթերի համակերպութեամբ մը աստուածային ձայնը հեղինակութեան մէջ՝ ուսկից ալ որ բխէր ան, միւսով կը դասէր ինքզինքը քան զամենքն յետնագոյն ու կարօտ: Խոնարհութեան մէջ գտեր էր իր ամենասիրելի գանձը՝ սրտի ուրախութիւն և գոհութիւն, այս պատճառաւ նոյն իսկ առտնին ծառայական գործերն իր առանձին ուշադրութեան առարկայ էին: Կրօնաւորական աղքատութիւնը սիրելու և գործադրելու կերպէն պիտի ուզէինք ըսել թէ կարծես մկրտութեան անուանակից Սուրբէն հոգեպէս դաս կ'առնէր: